ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.01.2016թ.
266-ի 7

ՀՀ մշակույթի նախարար
տիկին Հասմիկ Պողոսյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Պողոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ չափորոշիչներով են ընտրվում ՀՀ վաստակավորի կոչման հավակնորդները (քանի՞ տարի պետք է լինեն ոլորտում, ի՞նչ նպաստավոր գործունեություն պետք է ծավալած լինեն եւ այլն),
2. Ո՞վ կամ ի՞նչ կառույց է միջնորդում նրանց համար:,
3. Արդյոք անմիջապե՞ս եք արձագանքում բոլոր հավակնորդների համար արված միջնորդություններին (կան վաստակաշատ արտիստներ, ովքեր պնդում են, որ արդեն մի քանի տարի է, իրենց մասին դիմումները նախարարությունում են, բայց անարձագանք),
4. Երգիչ Արմեն Գոնդրաչյանի (Արմենչիկ)՝ ՀՀ Վաստակավոր արտիստի կոչումը շատերի համար խնդրահարույց է: Խնդրում եմ հայտնել, թե ով՞ է երգչի համար հայտ ներկայացրել և իր դեպքում ո՞ր չափանիշներով եք առաջնորդվել:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ ադմինիստրատոր Անժելա Նորիկյան